ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորանքի խոսքը՝ Ոստիկանության աշխատողի օրվա առթիվ

16.04.2026

Հարգելի՛ ոստիկանության ծառայողներ,
Սրտանց շնորհավորում եմ ձեզ Ոստիկանության աշխատողի օրվա առթիվ:
Ձեր պատասխանատու և պատվաբեր ծառայությունը կարևորագույն դեր ունի մեր հասարակության անվտանգության, իրավակարգի ամրապնդման և քաղաքացիների իրավունքների պաշտպանության գործում: Ամեն օր, հաճախ բարդ ու վտանգավոր պայմաններում, դուք պատվով իրականացնում եք ձեր առաքելությունը՝ պահպանելով հասարակական կարգն ու խաղաղությունը:
Գեղարքունիքի մարզում ևս ձեր նվիրված աշխատանքի շնորհիվ շարունակաբար ամրապնդվում է օրենքի գերակայությունը, բարձրանում է քաղաքացիների անվտանգության մակարդակը և վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ:
Բարձր եմ գնահատում ձեր մասնագիտական պատրաստվածությունը, պատասխանատվության զգացումը և հայրենանվեր ծառայությունը:
Մաղթում եմ ձեզ քաջառողջություն, անսպառ ուժ ու կորով, նորանոր հաջողություններ ծառայության մեջ և խաղաղ ու անվտանգ առօրյա: